մուրհակն անպատճառ Խորհրդական գրագիրի գրովն լիցի, և Ս. Պատրիարքն կնքեսցէ. նոյնպէս և փոլիցայք գրեանքն լիցին, բայց յատուկ ողջունագիր նոցա կնքով Խորհրդականաց լիցի։

6°. Եթէ ըստ եկեղեցականութեան և եթէ ըստ քրիստոնէութեան կամիցի ոք միաբանիլ, և կամ Մերունեաց և գործակալաց սիրոյանայցէ սպասաւոր, գիտութեամբ Խորհրդականաց լիցի ընտրութիւն նոցա. մի ընկալցին 'ի միաբանութիւն զստահակս և զարբեցողս, և մի զանմօրուս պատանիս հանցեն 'ի դաս, զի այնպիսիք առիթ են աւերման կարգաց Ս. Տանն, և անուան բոլոր միաբանութեան. այլ զայնպիսիսն մերժել և արտահալածել զայժմեանսն, և յառաջակայէն զգուշանալ։

7°. Զանգէտս, զանկիրթս, զանփորձս և զանուղղայս մի կոչել յաստիճան և 'ի գործակալութիւն, եւ մի բնաւ հանել 'ի վիճակս յԱռաջնորդութիւն և 'ի Նուիրակութիւն, զի նոցին այնպիսեաց անուղղայ գնացիւքն, և բռնի անկանոն տիրելով և իշխելովն և անչափ պահանջելովն զզուին ժողովուրդք վիճակաց, և ցրտանան 'ի սիրոյ Ս. Աթոռոյն և եկեղեցականաց, եւ յառաջանայ վնաս մեծ յարդիւնս, և դայթակղութիւն 'ի հաւատս։ Այլ պարտ է Նուիրակաց սիրաշահս լինել եւ համեղախօս և քաղցրաբարոյ. զի մի ինքեանք այնքան աշխատեսցին 'ի պահանջելն, որքան տուողքն 'ի սէր նոցին վառեալ փութասցին 'ի տալ յօժարութեամբ և փափաքանօք։

8°. Նուիրակունք 'ի վճարել գործոց իւրեանց գնացեալ 'ի Ս. Աթոռն ամենայն հարազատութեամբ և մտերմութեամբ տացեն զհաշիւ արդեանց և ծախուց յանուանէ տումարիւ 'ի ներկայութեան Խորհրդականաց. մի լիցի խորել և իւրացուցանել ինչ 'ի գոյից որք տուեալ լինին նոցա 'ի ժողովրդոց թէ յայտնի և թէ 'ի ծածուկ յանուն Ս. Տեղեաց և Մեծի Աթոռոյն, մտաբերելով զԱնանիայն և զՍափիրայն և զանցս նոցին, այլ ըստ իրաւանց շատ լիցի նոցա ժամուցն իւրեանց և գաւազանապտուղն։ Եւ այսպէս հարազատութեամբ գործակատարքն վարձատրեսցին յԱստուծոյ և ըստ արժանեաց պատուեսցին 'ի միաբանութեան, և յառաջեսցեն յայլ եւս մեծ գործակատարութիւն։ Իսկ